

Գիւմուշ գիւղի այժմեան բնակիչները շիա թուրքեր են: Պարսկաստանից, 71 տուն 224 ար. 216 իգ. ի միասին՝ 439 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 353 գ. 960 ք. ս. վարելահող և 483 գ. 2016 ք. ս. արօտատեղի:

ՔԵԱՆՔԵԱՆԻ ԳԻՒԴԱԿԱՆ ՀԱՍՈՐԱԿՈՒԹԻՒՆ

Քեանքեանի գիւղական համայնքը, որ բռնում է նախկին Մազազ գաւառի մի մասը, ներկայացնում է մի բարձրաւանդակ, կտրտուած Ամմանկան լեռնաշղթայի ճիւղերով: Երկիրն ընդհանրապէս բարձրադիր է, լեռներն մերկ և ապառաժոտ, շատ տեղեր ծածկուած ահագին կարկանդակով: Տեղ տեղ երևում են լեռնային գոգաւորութիւններ՝ ծածկուած աղքատ բուսականութեամբ, ահա այսպիսի տեղերում զետեղուած են փոքրիկ գիւղեր, որոնք հազիւ հազ կարողանում են իրենց գոյութիւնը պահպանել: Լեռներից ամենանշանաւորը Շամիրամայ լեռն է, որ այժմ կոչւում է Հադիս, այսինքն մեծ, առաջաւոր, 8337 ոտնաչափ բարձրութեան: Լեռը լերկ է, անշուշտ հրաբխային, զուրկ բուսականութիւնից, գագաթին կայ մի հինաւորաց փոքրիկ ամրոցի հետք և մի քատայր:

Երկրորդ նշանաւոր լեռը Քոթան—դաղն է, որ այսպէս է կոչուել, որովհետեւ բոլոր լանջերին քոթանը այսինքն գութանը բանում է, մշակելի է: Բարձրութիւնն է 7581 ոտնաչափ:

Այս ամբողջ բարձրաւանդակի վրայ ոչ մի գետ կամ գետակ չկայ և նոյն իսկ աղբիւրներ չափազանց սակաւաթիւ են. գարնան սկզբին, երբ հալչում է ձիւնը՝ հազարաւոր վտակներ վազում են լեռների գագաթներից դէպի ներքե, գոգաւորութիւնները և բնական լճակներ կազմում, ինչպէս Օճախլուն՝ Քեանքեանի մօտ: Տեղացիներն էլ ամբարն համար ջուր տնտեսելու նպատակով բոլոր գիւղերի մօտ՝ առանց բացառութեան՝ մի կամ մի քանի մեծ աւազաններ են շինել 20—50 մետր լայնութեան և 1—3 մետր խորութեան, ուր ամբարւում է այդ վտակների ջուրը՝ առաւելապէս կենդանիներ ջրելու: Սակայն աշնանը և ձմեռանը, երբ սաստիկ ցրտից ամեն ինչ սառչում է և մօտ 1 $\frac{1}{2}$ մետր բարձրութեան ձիւն նստում ու սաստիկ քաթին ահագին բուք բարձրացնելով կտրում ամեն տեսակ հաղորդակցութիւն, խեղճ տեղացիները ձիւնը լցնում են կաթսաները, դնում կրակին հալում և այդ ջուրը գործածում, իսկ կենդանիները ջրելու համար պատրաստում են «Կարլիխ»—ձիւնանոց.—Սա երկու մետր

տրամագծով և նոյնքան բարձրութեան գլանաձև շէնք է գոմի մի անկիւնում, ծածկուած և մի փոքրիկ հերթիկ բաց թողած: Մի դռնակի մեծութեան բացուածք էլ դէպի գոմն է թողնուած: Այս գլանաձև շէնքի մէջ, կիսից բարձր, առիշեղ թաղթ է կապուած փայտէ ձողերով և ձիպոտներով. հերթիկից ձիւնն ածում են այս թաղթի վրայ և անմիջապէս հերթիկը ծածկում: Դէպի գոմը թողնուած բացուածքից գոմի տաքութիւնն անցնում է այստեղ և հալում ձիւնը, լցնում գլանաձև շէնքի ներքին մասը, որ սալալատակած է լինում: Այսպիսով հաւաքուած ջրից խմում են կենդանիները՝ հէնց այդ միևնոյն բացուածքից ներս կոխելով գլխները: Միևնոյն ջուրը գործ են ածում նաև լուացքի և այլ պէտքերի համար:

Քեանքան.—(62° 23' 45"—40° 20' 5").—Համանուն գիւղական համայնքի կենտրոնական գիւղն է համարուում, և տեղաւորուած է մի ընդարձակ լեռնադաշտի վրայ՝ շրջապատուած մեծ և փոքր լեռներով, որոնցից նշանաւոր են՝ հարաւային կողմում, Հագիս լեռը (8337'), որի հարթ գագաթին նկատելի են պարսպի հետքեր, իսկ փոքր ինչ ներքև կան մի քանի բնական և արհեստական բարայրեր: Արևմտեան կողմում բարձրանում է Կալաջա սարը, որի գագաթին ևս կայ մի կիսաւեր ամրոց: Սրա մասին պատմում են, իբր թէ Քեօր—օղլին է շինել և շատ անգամ այդտեղ ապաստանել: Գիւղը բնում է 19 դ. 800 ք. ս. տարածութիւն, որից 19 դ. 480 ք. ս. գտնւում է շինութիւնների տակ: Գիւղի զրիթէ կենտրոնում կայ մի բարակ աղբիւր, որ միայն երկու տարի առաջ են հանել, իսկ մինչ այդ օգտուում էին ջրհորներից՝ քեանքան, որի պատճառով և գիւղը այդպէս է կոչուել: Այժմ ևս գիւղացիները ջրի մեծ պակասութիւն են կրում: Գիւղի մէջ եղել է հայկական մի եկեղեցի, որի տեղը միայն այժմ ցոյց են տալիս, և երկու ընդարձակ գերեզմանատուն, ուր դեռ ևս մնում են մի քանի խաչքար և օրօրոցածէ տապանաքար, որոնց վրայ քանդակուած են ձիււոր մարդիկ, հաց, գաւ, և այլն: Սրանցից երկուսի վրայ կայ հետեւեալ տապանագիրը.

—Այս է տապան Մաթէոսի, որ փոխեցաւ ի Զրիստոս թ. ՌժԺԱ. (=1702):

Այս է հանգիստ Ամիրխանին, թվմ ՌժԺԱ.

Գիւղի տների մեծագոյն մասը գետնափոր է, այժմ հետզհետէ շինում են սենեակներ գետնի երեսին: Նոյն իսկ համայնքի դատարանի համար չկայ փոքրի շատէ յարմարաւոր շէնք:

Բնակիչները այս գաւառի թուլուճա գիւղից գաղթած շիա

թուրքեր են. 130 տուն. 487 ար. 452 իգ. միասին՝ 939 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1223 դ. վարելահող, 1098 դ. 1410 ք. ս. արօտատեղի: Աղքատ դասակարգը գնում է նրեան մշակութեան, կանայք էլ գորգ և կապերտ են գործում:

Թէզխարապից դէպի Քեանքեան երկիրը հետզհետէ բարձրանում է և քարքարոտ սարերով կտրատւում, տեղ տեղ էլ ահագին կարկանդակներ կազմում: Այս քարքարոտ բլուրների միջև ընկած է մի բաւական մեծ գոգաւորութիւն, ուր դարնան սկզբին հալւող ձեան ջուրը հաւաքուելով մի լճակ է գոյացնում, որ տեղում է մինչև ամառ: Այս լճակի մէջ կանգնած է մի ծառ, որ սուրբ է համարւում թէ բոլոր թուրքերից և թէ Թէզխարապի հայերից, այս պատճառով և լիճը Օձախու, սրբատեղի, է կոչւում:

Գարա-կալա.— (62° 27' 55" 40° 16' 32").— Տարածւում է մի բլրի գագաթին ու ստորոտում, բռնում է 12 դ. 1152 ք.ս. տարածութիւն: Գիւղի արևելահարաւային կողմում ձգւում է Աղմաղան լեռնաշղթան, արևմտահարաւային կողմում բարձրանում է մի հինաւուրց ամրոց: Գիւղում կայ մի եկեղեցու հիմնապատեր, մի աւեր մատուռ, և մի քանի խաչքար: Այստեղից երկու խաչքար մօտակայ Ձառ գիւղացիները տարել են իրենց գերեզմանատունը. սրանց վրայ եղել է հետեւալ տապանագիրը *):

Թվ. ՉԼԷ (= 1286). Ես Մամքոս կանգնեցի զխաչս յիշեցէք:

Թվ ՉՄԵ (= 1301). Կաման Աստուծոյ մեք ծայծնայս և Սարգիս կանգնեցաք զխաչս ի Զրիստոս. ամեն:

Գիւղում կայ երեք ջրհոր և երկու ջրի աւազան. տներն ողորմելի են, բոլորն էլ գետնափոր: Ձմեռն այստեղ 1½ մետր հաստութեան ձիւն է նստում, և կապում բոլոր ճանապարհները, սաստիկ բուք բարձրանում և խեղդում ճանապարհորդներին:

Բնակիչները շիա թուրքեր են, Բորչալուի և Ղազախի զանազան գիւղերից եկած: Ընդամէնը 91 տուն են, 405 ար. 354 իգ. միասին՝ 859 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և խաշնարածութեամբ: Ունին 679 դ. 780 ք. ս. վարելահող և 407 դ. 1496 ք. ս. արօտատեղի:

Այս գիւղի արևմտահարաւային կողմում բարձրանում է մի բլուր, պատած ահագին կարկանդակով, այնպէս որ վերև բարձրանալը շատ դժուար է: Ահա այս բլրի գագաթին գտնւում է մի

*) Մեւրովը եղ. Սմբատեան. Գեղաբունիք:

Հինաւուրց ամրոց, որ սև քարով շինուած լինելու պատճառով այժմ կոչուում է Կարա-կալա (սև ամրոց) և որ իւր անունը տուել է իւր մօտի գիւղին:

Կարծուում է թէ այս ամրոցը Գեղալոյ բերդը պիտի լինի: Ամրոցը կրկնապարսպ է, մինը միւսից մօտ 7 մետր հեռու, 2—3 մետր բարձրութեան և մօտ 3 մետր լայնութեան: Ամրացած է չորս աշտարակներով և ունի նոյնքան դուռն: Ներքին պարսպի միջի տարածութիւնը կը լինի մօտաւորապէս 40 մետր երկարութեան և 25 մետր լայնութեան: Ամրոցը կիսաւեր է և մօտը կան տների հիմնապատեր:

Գաւ-խարապա.—(62° 27'—40° 22' 16").—Մի փոքրիկ, անշան գիւղ է, 2 դ. 980 ք. ս. տարածութեամբ ուղտանման կարկառների միջև:

Նուութեան ճչ մի հետք չկայ: Այժմեան բնակիչները 1868 թուին գողթել են Սուրմալուի զաւառից. շիա քրդեր են, 47 տուն, 178 ար 228 իգ. միասին 406 հոգի: Պարապմունքը նոյնն է՝ երկրպործութիւն և անասնապահութիւն: Ունին 80 դ. վարելահող և 767 դ. 2020 ք. ս. արօտատեղի:

Կրդ—կալա.—(62° 25' 5"—40° 22' 30")—Տեղաւորուած է դարձկալ լեռների գոգաւորութեան մէջ և բռնում է 4 դ. 1920 ք. ս. տարածութիւն: Գիւղի արեւելեան կողմում ձգւում է Աղմաղանի լեռնաշղթան, իսկ աւելի մօտ՝ տնտնուն բլուրների մի շարք. արեւմտեան կողմում բարձրանում է կարկառներով պատած մի լեռով, որի գագաթին դռնուում է մի հինաւուրց, աւերակ ամրոց, Կրդ-կալա, աղջկալ բերդ: անունով: Գիւղի մէջ կայ ջրի մի մեծ աւազան, մօտաւորապէս 50 մետր երկարութեան, 30 մետր լայնութեան և ամենաշատը՝ 1½—2 մետր խորութեան. շուրջը քարերով պատած է, իսկ յատակը հէնց այնպէս թողած, առանց սալայատակելու: Այստեղ հաւաքւում է գարնան հալչող ձեռն ջուրը, որ մնում է մինչև աշուն և բաւականութիւն է տալիս տաւարին: Երբ այլ ջուրը սառչում է կամ վերջանում՝ սկսում են ջուր ստանալ՝ հալելով ձիւնը՝ յատկապէս այս նպատակով գոմերում շինուած «կարլըղ»-ներում: Ոմեիւ համար դրժ են ածում այն միակ աղբիւրի ջուրը, որ բղխում է Կրդկալա ամրոցի կարկառներից, որ ձեռն և անձրեի ջրերից գոյանալով՝ ձմեռը դադարում է հոսելուն, և այս ժամանակ գիւղացիները կաթսանների մէջ հալիցնում են մաքուր ձիւն և այն գործածում:

Գիւղի մէջ կայ մի աւեր հայկական եկեղեցի և սրա շուրջը՝ գերեզմանատուն, սակայն խաչքարեր չկան, այլ տափարակ գերեզմանաքարեր են, որոնց վրայ մարդ է գծագրած: Մի մատուռ էլ

ջրի աւազանի մօտ կայ, որի տեղը հարթելիս գտնուել է մի պղնձէ խաչ, որ այժմ Արզաքենդ գիւղի քահանայի մօտ է:

Բնակիչները շիա թուրքեր են, Ղազախի Կըզըլ-Հաճի գիւղից 1868 թուին դաղթած. ընդամէնը 35 տուն, 164 ար. 133 իգ. ի միասին 297 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 282 դ. 770 ք. ս. վարելահող և 713 դ. 380 ք. ս. արօտատեղի:

Նլիշա ագարակ.—(62° 25' 35"—29° 45', 40° 17' 47"—19° 50').—Մի հին գիւղատեղի է, ուր կան մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքար: Սրանցից երկուսի վրայ դեռ ևս կարելի է որոշել հետեւալ բառերը.

Թվիս 26 (=1256). Ես ծառայս Աստուծոյ Ամիր Զասուքայս որ վասն հաւ... զիս աշաւք եւ ծնուաք.

Մեղուցեալ ծ. Վուշս ուղիս իմոյ. չարչարեցին... Եւ ես անմեղ էի եւ անպարտ:

Այս ագարակը Նլիշա (քամոտ) կամ Նլի իւրտ (քամոտ ամառանոց) է կոչուում այն պատճառով, որ այստեղ շարունակ քամի, ել, է փչում Աղմաղանից: Երբեմն կոչուել է նաև Պալլիճա, (Մեղրանոց) երևի շատ լաւ մեղր, պալ, լինելու պատճառով: Հէնց այժմ էլ այստեղի մեղրը շատ գովուած է: Ագարակում կայ մի լճակ, շուրջը մի քանի ուռնիններ. աղբիւր չկայ, Զառ գիւղից են ջուր բերում: Այս ագարակը պատկանում է երկանցի Մուշեղեաններին և Մակաշեաններին, որոնք այստեղ ունին բնակարաններ և մի քանի գոմեր, որ բոնում են 2 դ. 300 ք. ս. տարածութիւն. իսկ շրջակայքը կան 439 դ. 1440 ք. ս. վարելահող, 485 դ. 890 ք. ս. խօտատեղի, 128 դ. 570 ք. ս. արօտատեղի: 2 դ. 1280 ք. ս. էլ գտնուում է ջրի տակ, որից 1 դ. 1500 ք. ս. կաղմում է մի փոքրիկ լճակ:

Այս հողերը տրուում են շրջակայ գիւղացիներին կապալով թէ՛ մշակելու և թէ՛ տաւար պահելու: Այստեղ կայ նաև ձիաբուծարան:

Թէզ-խարապ.—(62° 22' 50"—40° 22' 27').—Տեղաւորուած է Քոթան դաղի արևելեան կողմում, բլուրների գոգաւորութեան մէջ: Նրա արևելեան կողմում կայ մի մեծ աւազան, ուր թափուած է մի փոքրիկ աղբիւրի և ձեան, անձրևի ջուրը, որ տալիս են անասուններին, և իրենք գործ են ածում լուացքի համար. խմելու ջուրը վերցնում են կամ վերոյիշեալ փոքրիկ աղբիւրից և կամ մի կիլոմետր հեռու, Քոթան լեռան ստորոտում նոր շինած աղ-

քիւրից: Գիւղը բռնում է 9 դ. 2268 ք. սաժէն տարածութիւն, որից միմիայն 1308 ք. սաժէնն է աղատ շինութիւններից: Գիւղն ըստ երևոյթի բաւական հին է, որովհետեւ կայ մի հինաւուրց, սակայն հասարակ եկեղեցի, որի շուրջը եղած հին գերեզմանաքարերից մինի վրայ բանդակուած է ձեռները կրծքին դրած մի մարդ և եղծուած տապանագրից կարդացուած է միայն Ռիենթուականը (1576): Բնակիչները հայեր են և թուրքեր. Հայերը գաղթել են այստեղ Մակուի Օղակ գիւղից՝ միառժամանակ Աղ-փարայում բնակուելուց յետոյ, ընդամենը 92 տուն են, 333 ար. 331 իգ. միասին 664 հոգի, որից 3 տուն, 23 արական, 22 իգական, միասին 45 հոգի, շիա թուրքեր են, որ հայ-թուրքական ընդհարումի ժամանակ (1905 թ.) փախել գնացել են, սակայն կապալով են տալիս իրենց հողերը: Պարապմունքը երկրագործութիւն ու անասնապահութիւն է: Ունին 598 դ. 400 ք. ս. վարելահող և 762 դ. արօտատեղի:

Դալլակլու.—(62° 24' 35"—40° 18' 40").—Ընկած է Հադիս լեւան լանջին և բռնում է—4 դ. 1066 ք. սաժէն տարածութիւն, որից միայն 2 դ. 1248 ք. ս. շինութիւնների տակ: Գիւղի մէջ հչ միայն դետ, այլ և աղբիւր չկայ, այնպէս որ գիւղացիները ջրի համար շատ մեծ նեղութիւն են կրում, բերելով ¹/₂ կիլոմետր հեռու դանուոզ աղբիւրից: Տաւարը ջրելու համար կայ մի աւաղան այն ջրանցքի մօտ, որ գալիս է Աղմաղան լեռնաշղթայից, սակայն ամառը, երբ այս ջրանցքի ջուրը ցամաքում է, աւաղանն էլ չորանում է:

Բնակիչները շիա թուրքեր են, որոնց մեծագոյն մասը Երեւանի դաւառի Զառ գիւղիցն է գաղթել, իսկ մի մասը, մօտ 15 տուն, յառաջացել է այն ծաղկունքցի հայից, որ զոդութեան մէջ մեղադրուելով հանդիսաւոր կերպով երդուել է իւր անմիղութեան մասին՝ հանդցնելով աւետարանի առաջ դրուած մօմը. սակայն էլի չեն հաւատացել և զոդացուած գումարը դարձեալ պահանջել: Այս հանգամանքից նեղուած նա հեռացել է Դալլակլու և մահմեդականութիւն ընդունել: Ընդամենը 42 տուն են, 178 ար. 228 իգ. միասին՝ 406 հոգի:

Պարապմունքը նոյնն է: Ունին 448 դ. 1260 ք. ս. վարելահող 199 դ. 720 ք. ս. արօտատեղի:

Կուլլի.—(62° 25' 30"—40° 19' 37").—Տեղաւորուած է մի բարձրաւանդակի վրայ՝ շրջապատուած բլուրներով, բռնում է 5 դ. 390 ք. ս. տարածութիւն:

Գիւղում կայ երկու ջրհոր, կույի, որի պատճառով և գիւղը կոչւում է Կուլլի: Բացի սրանից կայ նաև մի աւաղան, որ

հաւաքւում է Աղմաղանից եկող ջրանցքի ջուրը, Գիւղում եղել է հայկական մի եկեղեցի, որ քանդել են և նրա տեղում մզկիթ կառուցել. սրա շուրջը և մանաւանդ հանդիպակաց բլրի վրայ կան բաւականաչափ գերեզմանաքարեր, սակայն առանց գրութեան. գիւղի եղրին կայ պահակատուն: Բնակիչները շիա թուրքեր են, երևան քաղաքից, որ 1828 թուին փախել են Կարսի շրջանի Սոսգորտ գիւղը և այդտեղից 1850 թուին դաղթել այստեղ: Ընդամենը 49 տուն են, 183 ար. 151 իգ. միասին՝ 334 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 513 դ. 1440 ք. ս. վարելահող, 642 դ. 2300 ք. ս արօտատեղի:

Չորան-գետրուկմազ. ($62^{\circ} 27' 37''$ — $40^{\circ} 15' 37''$).—Մի փոքրիկ աննշան գիւղ է Կարա-կալայի հարաւային կողմը, մօտ երեք կիլոմետր հեռու:

Գիւղում կայ մի եկեղեցու հիմնապատեր. բռնում է 8 դ. 1400 ք. ս. տարածութիւն. բնակիչները շիա թուրքեր են Կարա-կալայից դաղթած 9 տուն. 45 ար. 43 իգ. միասին 88 հոգի: Պարապում են խաշնարածութեամբ և մասամբ երկրագործութեամբ. ունին 206 դ. 636 ք. ս. արօտատեղի և միայն 11 դ. 1000 ք. ս. վարելահող:

ԳԱՒԱՌԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ.

Նոր-Բայազէտի գաւառը կառքի ճանապարհով հաղորդակցում է Երևան քաղաքի, Աղէքսանդրապոլի գաւառի Դարաքիլիսայի երկաթուղու կայարանի և Շարուր-Դարալագեաղի գաւառի Բաշ-Նորաշէն գիւղի հետ: Դէպի Երևան և դէպի Դարաքիլիսա կան փոստային կառքեր և կայարաններ, թէև ճանապարհը ոչ ամբողջովին խճուղի է: Նոր-Բայազէտից Բաշ-Նորաշէն տանող ճանապարհը, որ մեծ մասամբ շինուած է նրա շրջակայքում գտնուած գիւղերի ձրիաքար տուած բանուորների ձեռքով, դեռ ևս չունի փոստային հաղորդակցութիւն: Գաւառի կենդրոնական քաղաք Նոր-Բայազէտը հեռու է Երևանից $116\frac{1}{4}$, Դարաքիլիսայից $130\frac{1}{2}$ և Բաշ-Նորաշէնից 130 վերստով: Գիւղերի միջև ձգւում են նեղ կածաններ, տեղ տեղ էլ սայլի հասարակ ճանապարհ: Բաղաբում և Դարաչիչագում կան ֆաթոններ և սահնակներ, ինչպէս նաև ֆուրգոններ:

Ելնողիկում, Ալէքսանդրովկում, Օրդակլում և Դարաչիչակի գիւղերում, Բասարգեչարում, Նադեժդինում կան ֆուրգոններ, իսկ սայլեր բոլոր գիւղերում՝ բացի Քեանքեանի գիւղական